

ԿՈՂ
050.0172 Ն. 09.07.13

9 հուլիսի 2013 թվականի թիվ 172-Ն

**ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ՝
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ (ՖՈՆԴԵՐԻ) ՓԱՅԵՐԻ, ԴՐԱՆՑ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՄՍԱԿԱՆ
ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

(Նախաքանը փոխ. 15.07.14թ. թիվ 173Ն)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակցին տրամադրվող՝ «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի, դրանց ընդհանուր հաշվարկային արժեքի, ինչպես նաև մասնակցի միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերաձեւու դեպքում ամսական գումարի մասին տեղեկանքի ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի, դրանց ընդհանուր հաշվարկային արժեքի, ինչպես նաև մասնակցի միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերաձեւու դեպքում ամսական գումարի մասին տեղեկանքի լրացման ուղեցույցը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

2013 թ. հուլիսի 12
Երևան

Հավելված 1

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 172-Ն որոշմամբ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ (ՖՈՆԴԵՐԻ) ՓԱՅԵՐԻ, ԴՐԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՄՍԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ		
ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ		
1. Հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար	2. Անուն	3. Ազգանուն
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԱՐԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ		
4. Փայերի քանակը ըստ ֆոնդերի		
Կառավարչի անվանում Ա		
	Ֆոնդի անվանում 1/ գաղտնագրված ծածկագիրը	
	Ֆոնդի անվանում 2/ գաղտնագրված ծածկագիրը	
Կառավարչի անվանում Բ		
	Ֆոնդի անվանում 1/ գաղտնագրված ծածկագիրը	
	Ֆոնդի անվանում 2/ գաղտնագրված ծածկագիրը	
5. Փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը (<< դրամ)	6. Հատուցվող գումարը (<< դրամ)	
7. Ընդհանուր գումարը (<< դրամ)	8. Ամսական վճարի չափը (<< դրամ)	9. Ամսական վճարը արտահայտված հիմնական կենսաթոշակի մասերով
Ձեր կենսաթոշակը կարող եք ստանալ` _____:		
Վերոնշյալ տեղեկությունները ներկայացված են _____ դրությամբ և կարող են փոփոխվել: <small>(օր/ամիս/տարի)</small>		

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 172-Ն որոշմամբ

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի, դրանց ընդհանուր հաշվարկային արժեքի, ինչպես նաև մասնակցի միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարի մասին տեղեկանքի լրացման ուղեցույց

1. «1. Հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը,
2. «2. Անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. Ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. Փայերի քանակը» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի կողմից կենսաթոշակային հաշվի տվյալների վերաբերյալ տեղեկությունների ստացման դիմումը (<< ԿԲ խորհրդի 21.06.2011 թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ի հավելված 5-ով նախատեսված) ներկայացնելու պահի դրությամբ մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի քանակը ըստ ֆոնդերի արտահայտված թվերով և կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ,
5. «5. Փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի կողմից կենսաթոշակային հաշվի տվյալների վերաբերյալ տեղեկությունների ստացման դիմումը (<< ԿԲ խորհրդի 21.06.2011 թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ի հավելված 5-ով նախատեսված) ներկայացնելու պահի դրությամբ մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը արտահայտված << դրամով,
6. «6. Հատուցվող գումարը» վանդակում, եթե հատուցման դեպքը առկա է, պարտադիր լրացվում է երաշխիքային ֆոնդի կողմից մասնակցին հատուցվող << դրամով արտահայտված գումարի չափը, ընդ որում, եթե մասնակցի կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպքը բացակայում է, ապա «8. Հատուցվող գումարը» վանդակում լրացվում է «0»,
7. «7. Ընդհանուր գումարը» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների և մասնակցի կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպքի առկայության դեպքում հատուցման գումարի հանրագումարը,
8. «8. Ամսական վճարի չափը» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների և մասնակցի կատարած պարտադիր կուտակային վճարների

հատուցման դեպքի առկայության դեպքում հատուցման գումարի հանրագումարը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը արտահայտված << դրամով, որը հաշվարկվում է դիմումի ներկայացման պահի դրությամբ մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի ընդհանուր հաշվարկային արժեքի, երաշխիքային ֆոնդի հատուցման գումարի և երկու սեռի համար ունիվերսալ մահացության աղյուսակների կիրառմամբ,

9. «9. Ամսական վճարը արտահայտված հիմնական կենսաթոշակի մասերով» վանդակում պարտադիր լրացվում է «8. Ամսական վճարի չափը» վանդակում լրացված գումարը արտահայտված հիմնական կենսաթոշակի մասերով,

10. «Ձեր կենսաթոշակը կարող եք ստանալ» դաշտում՝ ելնելով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի ընդհանուր հաշվարկային արժեքից և հատուցվող գումարից, պարտադիր լրացվում է մասնակցի կողմից իր կենսաթոշակի ստացման հնարավոր տարբերակ(ներ)ը: Ընդ որում, եթե մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների և մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպքի առկայության դեպքում հատուցման գումարի հանրագումարը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը կամ հավասար է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, ապա «Ձեր կենսաթոշակը կարող եք ստանալ» վանդակում լրացվում է «անուփտետի, ծրագրային վճարի կամ/և միանվագ վճարի ձևով», եթե մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների և մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպքում հատուցման գումարի հանրագումարը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարի հանրագումարը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, բայց փոքր հիմնական կենսաթոշակի հնգապատիկից, ապա «Ձեր կենսաթոշակը կարող եք ստանալ» վանդակում լրացվում է «միայն անուփտետի ձևով», և եթե մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների և մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպքի առկայության դեպքում հատուցման գումարի հանրագումարը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա «Ձեր կենսաթոշակը կարող եք ստանալ» դաշտում լրացվում է «հիմնական կենսաթոշակի հնգապատիկն ապահովող անուփտետի, իսկ մնացած մասը անուփտետի, ծրագրային վճարի կամ միանվագ վճարի ձևով»,

11. «Վերոնշյալ տեղեկությունները ներկայացված են _____ դրությամբ և կարող են
(օր/ ամիս/ տարի)

փոփոխվել:» վանդակում լրացվում է կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների ստացման դիմումը ներկայացնելու ամսաթիվը: